

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇԶԲ-22/3»

ք. Երևան

«20» ապրիլի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Գագիկ Սաֆարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռազմիկ Մայիլյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված վերականգնողական աշխատանքներ (ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի նորոգման, ամրակայման աշխատանքներ) (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված.

1.3.1 2022թ կատարման ենթակա աշխատանքները («Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետ) սկսվում են ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող **համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 210-րդ օրացուցային օրը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում:**

1.3.2 2023թ կատարման ենթակա աշխատանքները («Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետ) սկսվում են ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող **համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 210-րդ օրացուցային օրը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում:**

1.3.3 2024թ կատարման ենթակա աշխատանքները («Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետ) սկսվում են ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող **համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 210-րդ օրացուցային օրը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԳՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ ստանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) իրականացումը դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ուղղամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեոուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 5.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 5): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 (տասնհինգ) աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596 Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 116239355 (մեկ հարյուր տասնվեց միլիոն երկու հարյուր երեսունինը հազար երեք հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ, որից 19373226 (տասնինը միլիոն երեք հարյուր յոթանասուներեք հազար երկու հարյուր քսանվեց) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, ընդ որում.

2022թ համար պայմանագրի գինը կազմում է 26735052 (քսանվեց միլիոն յոթ հարյուր երեսունհինգ հազար հիսուներկու) ՀՀ դրամ, որից 4455842 (չորս միլիոն չորս հարյուր հիսունհինգ հազար ութ հարյուր քառասուներկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

2023թ համար պայմանագրի գինը կազմում է 59282071 (հիսունինը միլիոն երկու հարյուր ութսուներկու հազար յոթանասունմեկ) ՀՀ դրամ, որից 9880345 (ինը միլիոն ութ հարյուր ութսուն հազար երեք հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

2024թ համար պայմանագրի գինը կազմում է 30222232 (երեսուն միլիոն երկու հարյուր քսաներկու հազար երկու հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ, որից 5037039 (հինգ միլիոն երեսուկոթ հազար երեսունինը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:³¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՐԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և

³¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գետունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի

լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված 2022, 2023, 2024 թվականների կատարման ենթակա աշխատանքներն իրականացվում են այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում Պայմանագրով նախատեսված՝ 2022թ կատարման ենթակա աշխատանքների համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Պայմանագիրը 2023 և 2024 թվականների համար նախատեսված կատարման ենթակա աշխատանքների մասով լուծվում է, եթե դրանցից յուրաքանչյուրին նախորդող տարվա համար նախատեսված աշխատանքների կատարման մասով պայմանագիրը սովորական օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում տվյալ տարվա աշխատանքների կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի սուպահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի սուպահովումների փոխարինման դեպքում նաև նոր սուպահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2,
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

ՀՎՀՀ 02698732

Կ Ա Պ Ա Լ Ա Ռ ՈՒ

«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության 1 նրբ. 8/Ա տ.
Հեռ.՝ (+374) 93743040
Էլ. Փոստ՝ artmashin@mail.ru
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470100564110000
ՀՎՀՀ 02576479

Գլխավոր քարտուղար՝



Գ. Մաֆարյան

Տնօրեն՝



Ռ. Մայիլյան

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Չափաբաժին 1. Վերականգնողական աշխատանքներ

(ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հ. Շարաֆբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի նորոգման, ամրակայման աշխատանքներ)

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավորի գինը (հազար ՀՀ դրամ)	Գումարը (հազար ՀՀ դրամ)
1	2	3	4	5	6
2022 Թ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ					
1	Քանդման աշխատանքներ				
3	Տանիքի թիթեղյա ծածկի քանդում	խմ	17	13.893	236.181
9	Հողի հետլիցք հիմքերի կառուցումիս հետո, ձեռքով և տուփանում	խմ	17	2.593	44.081
10	Շին.աղբի հավաքում և տեղափոխում բարձելու համար	տն	17.8	3.705	65.949
11	Բեռնում շինարարական աղբի ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ	տ	17.8	2.779	49.466
12	Շինարարական աղբի տեղափոխում մինչև 5կմ	տ	17.8	5.557	98.915
13	Բեռնաթափում շինարարական աղբի ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ	տ	17.8	4.631	82.432
	Ընդամենը				577.024
	Ընդամենը տոկոսներով				2.72 %
	Բաժնի աշխատանքների համար սահմանված առավելագույն կշիռը				2.757 %
14	Հիմքեր և միաձույլ ե/բետոնյա կոնստրուկցիաներ				
15	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B 12.5 դասի բետոնից, հիմնահեծանների տակ	խմ	11.5	33.342	383.433
16	Ե/բ միաձույլ հիմքի հեծանի պատրաստում B25դասի բետոնից	խմ	7.7	79.651	613.313
17	Ամրան օ 8A-I (1 լրակ.-0,243տ)	լրակ	1	152.819	152.819
18	Ամրան օ14A500C -(1 լրակ.-0,577տ)	լրակ	1	342.685	342.685
19	Հիմքերի ուղղահայաց ջրամեկուսացում 1 շերտ իզոգամ	քմ	127.2	2.593	329.830
20	Ե/բ միաձույլ պատի պատրաստում 20 սմ հաստությամբ B25 դասի բետոնից	քմ	29.9	18.524	553.868
21	Երկաթբետոնե պատերի և միջնապատերի իրականացում մինչև 6մ բարձրությամբ, մինչև 200մմ հաստությամբ, M-350 դասի բետոնով, 10-20մմ չափաբաժնի խիճով	խմ	11.9	92.618	1102.154
22	Ամրան օ 6A I (1 լրակ. -0,019տ)	լրակ	1	12.966	12.966
23	Ամրան օ 8A-I (1 լրակ. -0,253տ)	լրակ	1	152.819	152.819
24	Ամրան օ14A500C (1 լրակ.-1,86տ)	լրակ	1	1111.412	1111.412
25	D=100մմ խողովակի տեղադրում պատի մեջ	մ	14	6.020	84.280
26	Ե/բ միաձույլ ծածկի սալի պատրաստում B25 դասի բետոնից	խմ	3.84	79.651	305.860
27	Ամրան օ 8A-I (1 լրակ.-0,253տ)	լրակ	1	152.819	152.819

28	Ամրան ø12A500C (1 լրակ.-0,359տ)	լրակ	1	217.652	217.652
29	Գրունտի խտացում խիճով	քմ	13.2	2.315	30.558
30	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում 100մմ հաստությամբ B25 դասի բետոնից,	խմ	2.25	79.651	179.215
31	Ցեմենտային նախաշերտի /հարթեցնող շերտ/ փոում 30 մմ հաստությամբ	քմ	13.2	3.334	44.009
32	Հարթեցնող շերտի պատրաստում ցեմենտից 5մմ հաստ. (հաստության փոփոխման համար ավելացնել 10մմ կ.55-ին)	քմ	13.2	4.260	56.232
33	Ամրանային ցանց ø5B-1, 150*150մմ բջիջներով	քմ	13.2	2.593	34.228
	Ընդամենը				5860.150
	Ընդամենը տոկոսներով				27.62%
	Բաժնի աշխատանքների համար սահմանված առավելագույն կշիռը				27.58 %
41	Նոր պատ				
42	Ե/բ միաձույլ հիմքի հեծանի պատրաստում B25 դասի բետոնից	խմ	2.3	66.685	153.376
43	Ամրան ø8A I (1 լրակ. 0,048տ)	լրակ	1	32.416	32.416
44	Ամրան ø16A500C (1 լրակ.-0,096տ)	լրակ	1	57.423	57.423
45	Ներդիր տարրերի տեղադրում, մինչև 4կգ քաշով	տ	0.013	787.250	10.234
46	Ե/բ միաձույլ սյուների պատրաստում B25 դասի բետոնից	խմ	1.8	79.651	143.372
47	Ամրան ø8A I (1 լրակ.-0,033տ)	լրակ	1	27.785	27.785
48	Ամրան ø16A500C (1 լրակ.-0,09տ)	լրակ	1	57.423	57.423
49	Ներդիր տարրերի տեղադրում, մինչև 4կգ քաշով	տ	0.028	787.250	22.043
50	Ե/բ միաձույլ բարավորների պատրաստում B25 դասի բետոնից	խմ	1.8	79.651	143.372
51	Ամրան ø8A-I (1 լրակ.-0,044տ)	լրակ	1	32.416	32.416
52	Ամրան ø12A500C (1 լրակ.- 0,053տ)	լրակ	1	36.121	36.121
53	Ամրան ø14A500C -(1 լրակ.-0,144տ)	լրակ	1	138.926	138.926
60	Ժտպավենային հիմքերի ամրացում B25 դասի ե/բ շապիկով	խմ	34.7	79.651	2763.890
61	Ամրան ø6A-I -(1 լրակ.-0,349տ)	լրակ	1	324.162	324.162
62	Ամրան ø12A500C -(1 լրակ.-1,832տ)	լրակ	1	1481.883	1481.883
63	Ներդիր տարրերի տեղադրում, մինչև 4կգ քաշով	տ	0.088	787.250	69.278
64	Անցքերի շաղափում ø15մմ 250մմ խորությամբ	հատ	278	1.852	514.856
65	Անցքերի շաղափում ø15մմ 500մմ խորությամբ	հատ	254	2.038	517.652
66	Շաղափված անցքերի լցում շաղախով	հատ	532	1.111	591.052
67	Պատերի ուժեղացում տորկրետ բետոնով 20մմ հաստությամբ /դրսի պատերը/	քմ	200	7.409	1481.800
68	Յուրաքանչյուր 5մմ համար ավելացնել մինչև 4մ բարձրությամբ ժ6-247 /ավելացնել 40մմ/	քմ	200	2.779	555.800
69	Մետաղական ցանցի և խարսխային ամրանների տեղադրում /դրսի պատեր/	քմ	1284.0	2.315	2972.460
70	Ամրան ø6A I (1 լրակ.-5,33տ)	լրակ	0.318	4260.413	1354.811
71	Ամրան ø10A500C (1 լրակ.-2,24տ)	լրակ	0.324	1806.044	585.158
72	Ամրան ø12A500C (1 լրակ.-0,602տ)	լրակ	0.323	351.947	113.679
73	Ամրան ø12A-1 (1 լրակ.-1,16տ)	լրակ	0.323	926.177	299.155
	Ընդամենը				14480.543
	Ընդամենը տոկոսներով				68.25%

	<i>Բաժնի աշխատանքների համար սահմանված առավելագույն կշիռը</i>				68.167 %
74	Պատեր				
75	Պատերի կառուցում տուֆի կանոնավոր քարերից	խմ	5.1	37.047	188.940
76	Պատերի շարվածքի ամրանավորում	տ	0.111	796.512	88.413
77	Պատերի շարվածք աղյուսով.	խմ	0.6916	33.584	23.226
	<i>Ընդամենը</i>				300.579
	<i>Ընդամենը տոկոսներով</i>				1.42%
	<i>Բաժնի աշխատանքների համար սահմանված առավելագույն կշիռը</i>				1.496 %
	<i>Ընդամենը</i>				21218.295
	<i>Ընդամենը 2022թ համար սահմանված կշիռը</i>				100%
	<i>Շահույթ - 5 %</i>				1060.915
	<i>Ընդամենը</i>				22279.210
	<i>ԱԱՀ - 20%</i>				4455.842
	<i>ԸՆԴԱՄԵՆԸ 2022 Թ ՀԱՄԱՐ</i>				26735.052

2023 Թ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավորի գինը (հազար ՀՀ դրամ)	Գումարը (հազար ՀՀ դրամ)
1	2	3	4	5	6
1	Քանդման աշխատանքներ				
2	Տանիքի թիթեղյան ծածկի քանդում	100քմ	1.98	16.000	31.680
4	Տանիքի ձեղնալուսամուտների քանդում	հատ	2	1.200	2.400
5	Նույնի տարացուցիչ շերտի հեռացում որպես շին.աղբ	խմ	22	2.000	44.000
6	Տախտակյա հատակի և տափազերանի քանդում	100քմ	1.195	150.000	179.250
7	Տախտակյա հատակի և տափազերանի քանդում	100քմ	0.22	150.000	33.000
8	Փայտյա դռների ապամոնտաժում	100քմ	0.208	60.000	12.480
10	Շին.աղբի հավաքում և տեղափոխում բարձելու համար	տն	57	1.300	74.100
11	Բեռնում շինարարական աղբի ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ	տ	57	1.000	57.000
12	Շինարարական աղբի տեղափոխում մինչև 5կմ	տ	57	2.000	114.000
13	Բեռնաթափում շինարարական աղբի ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ	տ	57	0.500	28.500
	<i>Ընդամենը</i>				576.410
	<i>Ընդամենը տոկոսներով</i>				1.23%
	<i>Բաժնի աշխատանքների համար սահմանված առավելագույն կշիռը</i>				0.94 %
14	Հիմքեր և միաձույլ ե/բետոնյա կոնստրուկցիաներ				
34	Ե/բ միաձույլ գոտիների պատրաստում B25 դասի բետոնից	խմ	14.6	85.000	1241.000
35	Ամրան ø 8A-I (1 լրակ.- 0.382տ)		1	250.000	250.000
36	Ամրան ø12A500C (1 լրակ.- 0.494տ)		1	380.000	380.000
37	Ե/բ միաձույլ հեծանների պատրաստում B25 դասի բետոնից	խմ	4.1	64.079	262.723

38*	Ամրան օՑԱ-Ի (1 լրակ.- 0.092տ)	լրակ.	1	85.000	85.000
39	Ամրան օ16Ա500C (1 լրակ.- 0.529տ)	լրակ.	1	350.000	350.000
40	Խարսխի տեղադրում օՑԱ-Ի (1 լրակ.- 0.028տ)	լրակ.	1	25.000	25.000
	Ընդամենը				2593.723
	Ընդամենը տոկոսներով				5.51%
	Բաժնի աշխատանքների համար սահմանված առավելագույն կշիռը				5.27 %
41	Նոր պատ				
54	Ներդիր տարրերի տեղադրում, մինչև 4կգ բաշռով	տ	0.028	860.000	24.080
55	В25 դասի բետոնից նախաշերտ դիաֆրագմ. շրջանակների հիմքերի տակ	խմ	8.5	86.000	731.000
56	Ե/բ միաձույլ դիաֆրագմային պատրաստում 20մմ հաստությամբ В25 դասի բետոնից	խմ	12	86.000	1032.000
57	Ամրան օՑԱ-Ի (1 լրակ.- 0.02տ)	լրակ.	1	15.000	15.000
58	Ամրան օ12Ա500C (1 լրակ.- 0.25տ)	լրակ.	1	160.000	160.000
59	Ամրան օ14Ա500C (1 լրակ.- 1.86)	լրակ.	1	1600.000	1600.000
64	Անցքերի շաղափում օ15մմ 250մմ խորությամբ	հատ	601	0.400	240.400
65	Անցքերի շաղափում օ15մմ 500մմ խորությամբ	հատ	2626	0.900	2363.400
66	Շաղափված անցքերի լցում շաղափով	հատ	3138	0.800	2510.400
67	Պատերի ուժեղացում տորկրետ բետոնով 20մմ հաստությամբ /դրսի պտտերը/	քմ	1716.7	3.000	5150.100
68	Յուրաքանչյուր 5մմ համար ավելացնել մինչև 4մ բարձրությամբ ժ6-247 /ավելացնել 40մմ/	քմ	1716.7	5.000	8583.500
